ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 3
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

4002, ՀՀ ք.ԻջեւանԹուխիկյան 25, РА, г, ИджеванТухикян 25, RA, IjevanTukhikyan 25
հեռ.тел.phon. /0263/ 4-30-72 E-mail: ijevan3@schools.am

N 34
«19» Նոյեմբերի 2020թ.

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ Ա/Ձ - ԻՆ

«Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի և Ձեր միջև 20.01.2020թ· կնքվել է «Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ՀՀ ՏՄԻ 3 ՀԴ –*ՄԱ-ԱՊՁԲ-20/02*» պայմանագիրը /այսուհետ՝ պայմանագիր/:

Պայմանագրի 7-րդ կետը սահմանում է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով պայմանագրի 7-րդ կետը, 2020թ. նոյեմբերի 19-ին միակողմանի լուծելու է «ՀՀ ՏՄԻ 3 ՀԴ –*ՄԱ-ԱՊՁԲ-20/02*» պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526 – Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կտեղադրվի gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Տնօրեն՝ /Հ. Պողոսյան/